Ի՞նչ է Payoneer-ը:

Payoneer-ը ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որը մատուցում է առցանց փոխանցումների և թվային վճարումների ծառայություն, այն տարածված է ամբողջ աշխարհում:
Payoneer-ի հիմնական նպատակն է հեշտացնել համաշխարհային ֆինանսական գործարքները ֆրիլանսերների, բիզնեսի և առցանց առևտրի համար: Հաճախորդները կարող են բացել վիրտուալ հաշիվներ տարբեր արժույթներով, ստանալ և ուղարկել միջոցներ ամբողջ աշխարհում ցածր միջնորդավճարներով: Payoneer-ն ակտիվորեն համագործակցում է տարբեր առցանց շուկաների և հարթակների հետ, ինչպիսիք են Upwork, Airbnb և այլն, ինչը հեշտացնում է հաճախորդներից վճարումներ ստանալը:
Payoneer-ն արդեն հասանելի է Converse Mobile-ով:

Ինչպե՞ս կարող եմ գրանցվել Payoneer-ում Converse Mobile հավելվածով:

Քայլ 1. Մուտք գործեք Converse Mobile հավելվածի գլխավոր էջ, սեղմեք Payoneer-ի վրա, այնուհետև՝ «Ստեղծել նոր հաշիվ» և դրամապանակներ բաժնում սեղմեք Payoneer-ի վրա:

Քայլ 2. Ընտրեք՝ կցել Payoneer-ի գործող հաշիվ կամ ստեղծել նոր հաշիվ:

Քայլ 3. Եթե հանդիսանում եք օգտատեր, ապա անհրաժեշտ է լրացնել Ձեր Payoneer-ի մուտքանունը/Email և գաղտնաբառը, որից հետո մուտք կգործեք Ձեր Payoneer հաշիվ:

Եթե չեք հանդիսանում օգտատեր, անհրաժեշտ է սեղմել «Ստեղծել նոր հաշիվ», որից հետո կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է ընտրել երկիրը և սեղմել «Sign Up» կոճակը:

Քայլ 4. Այնուհետև անհրաժեշտ է լրացնել լրացնել պահանջվող բոլոր տվյալները:

1. Getting Started
2. Contact Details
3. Security Details / ID Details
4. Bank Account Details

Քայլ 5. Նշեք, որ համաձայն եք, որպեսզի Կոնվերս Բանկը հասանելիություն ունենա Ձեր Payoneer հաշիվներին:

Քայլ 6. Այնուհետև բացվում է հաստատման պատուհան, որը տեղեկացնում է, որ Կոնվերս Բանկը հասանելիություն ունի Ձեր Payoneer հաշվին, և բացվում է հայտի ուղարկման մասին պատուհան:

Քայլ 7. Ձեր էլ հասցեին կստանաք նամակ այն մասին, որ Ձեր հայտը ուղարկված է հաստատման, այնուհետև կստանաք երկրորդ նամակը, որը կտեղեկացնի, որ Ձեր հաշիվը կցված է Converse Mobile-ին:

Կոնվերս Մոբայլ հավելվածում Payoneer հաշվի գրանցումն ավարտելիս էլ-նամակ չեմ ստացել: Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ դիմումի կարգավիճակը:

Նոր հայտերը Payoneer-ի կողմից սովորաբար դիտարկվում են անմիջապես, սակայն որոշ դեպքերում դիտարկումը կարող է տևել մինչև երեք աշխատանքային օր:

Payoneer-ից կստանաք հայտի դիտարկման վերաբերյալ նամակ:

Հայտը հաստատվելուց հետո էլ. փոստով կստանաք լրացուցիչ մանրամասներով ևս մեկ հաստատում: Որոշ դեպքերում կարող են

պահանջվել լրացուցիչ տվյալներ, ինչպիսիք են՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, բանկային քաղվածքը կամ այլ փաստաթղթեր: Փաստաթղթերի տեսակների և դրանց ստուգման մասին ավելին իմանալու համար անցեք հղումով:

Հարկավոր է ստուգել էլ. փոստի spam, trash բաժինները և այլ թղթապանակները՝ հայտի հետ կապված թարմացումները բաց չթողնելու համար:

Ես ներկայումս Payoneer-ում ունեմ տարբեր արժույթներով հաշիվներ: Կարո՞ղ եմ լրացուցիչ արժույթներ ավելացնել:

Payoneer-ի նոր գրանցված օգտատերերի համար հասանելի կլինեն միայն ԱՄՆ դոլար, Եվրո արժույթները: Լրացուցիչ արժույթները ցուցադրվում են օգտատիրոջ Payoneer հաշվում ըստ պահանջի:

Չցուցադրված լրացուցիչ արժույթների մասին տեղեկությունների համար կարող եք մուտք գործել Payoneer-ի Help Center էջ:

Որքա՞ն է կազմում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցման նվազագույն գումարի չափը:

Payoneer հաշվից Converse հաշվին փոխացման նվազագույն գումարը 5 ԱՄՆ դոլար / Եվրո + փոխանցման միջնորդավճարը:

Որքա՞ն է կազմում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցման մեկ գործարքի գումարի առավելագույն չափը:

Payoneer հաշվից Converse հաշվին փոխանցման մեկ գործարքի գումարի առավելագույն չափը կազմում է 5000 ԱՄՆ դոլար / Եվրո:

Որքա՞ն է կազմում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին օրական փոխանցման գումարի առավելագույն չափը:

Օրական կարող եք կատարել առավելագունը հանրագումարային 5.000 ԱՄՆ դոլար/Եվրո 14 փոխանցում:

Որքա՞ն է կազմում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին ամսական փոխանցման առավելագույն գումարի չափը:

Ամսական կարող եք կատարել առավելագունը հանրագումարային 10.000 ԱՄՆ դոլար/Եվրո 40 փոխանցում:

Որքա՞ն է կազմում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցման միջնորդավճարը:

Միջնորդավճարը կազմում է 2 %, որը սահմանվում է Payoneer-ի կողմից. փոփոխություններին կարող եք ծանոթանալ Payoneer-ի պաշտոնական էջում:

Որքա՞ն ժամանակում է հաշվեգրվում Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցված գումարը:

Payoneer հաշվից Converse հաշվին փոխանցված գումարը հաշվեգրվում է անմիջապես:

Կարո՞ղ եմ Կոնվերս հաշվից Payoneer հաշվին փոխանցում կատարել:

Ոչ, այս պահին Converse հաշվից չեք կարող փոխանցել Payoneer հաշվին:

Եթե արդեն կատարել եմ Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցում, կարո՞ղ եմ չեղարկել գործարքը:

Քանի որ փոխանցումը կատարվում է անմիջապես, գործարքը չեք կարող չեղարկել՝ բացառությամբ տեխնիկական խնդրով պայմանավորված դեպքերի:

Ինչպե՞ս կարող եմ տեսնել Payoneer հաշվից Կոնվերս հաշվին փոխանցված գումարների քաղվածքը:

Սեղմելով Payoneer-ի տվյալ հաշվի Պատմություն կարելի է տեսնել գործարքների պատմությունը:

Կարո՞ղ եմ Converse Mobile հավելվածից հեռացնել Payoneer հաշիվը:

Այո, կարող եք հեռացնել Payoneer հաշիվը Converse Mobile հավելվածից: Բայց միանգամից կհեռացվեն բոլոր հաշիվները:

Արդյո՞ք ապահով է Payoneer-ը:

Payoneer-ը համարվում է օգտագործման համար անվտանգ: Ընկերությունը ձեռնարկում է բազմաթիվ միջոցներ՝ ապահովելու ֆինանսական գործարքների անվտանգությունը և օգտատերերի տվյալների գաղտնիությունը:

Անվտանգության մակարդակը բարձրացնելու համար Payoneer-ն առաջարկում է բազմագործոն նույնականացում միացնելու հնարավորություն՝ պահանջելով լրացուցիչ կոդ կամ օգտագործելով կենսաչափական տվյալները՝ հաշիվ մուտք գործելիս: Payoneer-ը մի շարք միջազգային բանկերի գործընկեր է:

Կարո՞ղ եմ այլ անձի Payoneer հաշվեհամարը կցել իմ Converse Mobile հավելվածին:

Ոչ. Converse Mobile-ում օգտատերը հնարավորություն ունի կցելու միայն իր Payoneer հաշիվը: